

ԻՐԱՎՈՒՆԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔԵԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Պոլիարիոյ համար Տարեկան 12 ֆր.
» » Վեցամսեայ 6 ֆր.
Արտասահմանի համար (երկու քիւր մեկ ծրարով) Տարեկան 14, վեցամսեայ 7 ֆր.
ԿԱՆՈՒԻ ՎՃԱՐՆԵԼԻ

Համակ դրամ եւայլն դրկել հետեւեալ հասցեով
ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆ «ԻՐԱՎՈՒՆԿ» ԼՐԱԳՐՈՑ. — Վ.Ա.Ն.Ա. (Պուլկարիա)
Редация на ВѢСТНИКЪ
„И р а в у н к ъ“
ВАРНА (България)
Rédaction du journal
„I r a v o u n k“
V A R N A (Bulgarie)

Խմբագրութեան ուղղեալ գրութիւնք
եւ չեն դրկուիր եւ յարմար դատաւար-
ները միայն կը հրատարակուին աւ-
րոյցովիւ կամ մասամբ:
Խանութեան տղը 20 սանթիմ. երե-
սեակ աւելի անգամներու համար 20 0/0
զեղչ կը լինի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

Բարկի «Օռոն» թերթը հետեւեալ
խմբագրականը հրատարակած է:
«Նիքօլա Բ. Չարը իր մարդա-
սիրական Յայտարարութիւնը հը-
րապարակած րոպէին Ֆինլանտացի
փոքրիկ ժողովուրդին իրաւունքին
ու ազատութեանը դէմ ամենացած
զաւարթութիւնը ի գործ կը դնէր:
Հասկնալի գիտական ժողովի հետեւ-
եալ օրը Անգլիան Պոլսէն հեռու
բանակ մը կը զրկէ առանց իրաւա-
խօսութեան դիմելու: Եւ ահա
Հայաստանի մէջ շարքերը կը վե-
րսկան, կը լսուի թէ արդէն ար-
իւնը հոսի սկսած է Սեբաստիոյ,
Վանի եւ Սուլի նահանգներուն
մէջ:
Կարմիր Սուլիանի խոշտան-
գումներուն այս անգամ ալ Եւ-
րոպան հանգիստեմ ապառի մնալ,
իր աչքերը զոցելով, իր ականջ-
ները խցելով, որպէս չի լսէ ամ-
բող ժողովուրդի մը հոգեւորքի
հիւը:

1894ի կոտորածներէն վերջ բա-
ղաբարկեալ ազգերը արդարա-
ցում մը գտան թէ իրենք խաբ-
ուած էին ճիւղաղին մեզսակից ի-
րենց կառավարութիւններէն եւ ի-
րենց կաշառակիր մամուլէն: Յը-
րանայի մէջ նախարար Հանթօն
անխոհմարտ ստած էր երկար
ամիսներ, մինչդեռ իր թղթապա-
նակին մէջ կոտորածները նախատե-
սող, յետոյ անոնց նկարագրու-
թիւնը ընող հեռագիրներու ծրար
մը ունէր, որք կը թուէին հըր-
դեհուած գիւղերը եւ զլսատուած
քրիստոնեաներու հարիւրաւորնե-
րը: Հանթօն Երեսփոխանական
ժողովոյ մէջ կը յայտարարէր թէ
«Գործերը լաւ կերթան» ի Պօլիս
եւ ի փոքր Ասիա:

Դիտարկելու եւ հիւպատոսներուն
նամակները ու հեռագիրները կար-
գալ ու պահելէ վերջ Հանթօն
«Իրավի» թերթին Սուլիան Ապ-
տիւ Համիտի նկատմամբ քաղա-
քական դարձեալներով համեմ-
ուած յօդուածներ կը զրկէր: Օռ-
նէյի պալատին մէջ կընդունէր
պիղծ մամուլին Ալֆօնս Իւմպէրթ-
ները: «Էքզէն» թերթը իր առա-

ջին սուտերուն համար «Պատու»
լէքէն» պատուանշանը վաստակե-
ցաւ, «Ժողովուրդ տէ Տէպա» ի վա-
րիչները նաւամատոյցի եւ փորոս
ներու արտօնութիւնները շահեցան,
ուրիշներ ալ հնչին դրամ կըստա-
նային: Ոճրագործին մեծ հարս-
տութիւնը իրեն ամեն ինչ ընել
կը թողարկէր: Եւ երբ անոր
լրտեսները Ֆրանսա կուգան կա-
շառքով բանի մը երիտասարդ
թուրքերու մատնութիւնը ձեռք
բերելու, դեռ շատ խոնարհու-
թեամբ կ'ողջունէին կոտորածի
մասին միւր վեհանքն սքանչացող-
ներէն եւ թրքական ոսկիներու սի-
րահար մեր գրագէտներէն: Երեք
հարիւրհազար մարդկային արա-
րածներ զարհուրելի տանջաքնե-
րու տակ կը մեռնէին, իսկ Հանթօն
բաշա կը հռչակուի, կայսերական
«Իմթիյազ» ի եւ այլ շքանշաննե-
րու արժանանալով:

Կարելի է որ Պ. Տէքթասէ ստող,
սուտ երգունցնոյ եւ խաբեայ Հա-
նթօնի ընթացքը շարունակէ: Գո-
նէ Հանթօնի նախարարութեան
օրով Գաղղիան Պոլսոյ մէջ Պ.
Գամպոնի նման պարկեշտ մարդ մը
ներկայացուցիչ ունէր: Իսկ այսօր
Պ. Գոնթօնի անունը ու նկարա-
գիրը Սուլիանին աւելի ապահո-
ւութիւն կը ներշնչէ քան անոր
զոհերուն: Պէտք չէ որ այժմու
կառավարութիւնը խաբուի իր
գիտական ինչպէս որ ազգը խա-
բուած է երեսն իր կառավարու-
թեան:

Մեծ կոտորածէն ի վեր սպա-
նութիւնները բնաւ չեն դադարած:
Որչափ ի Պօլիս նոյնչափ գաւառ-
ներու մէջ հազարաւոր թշուառներ
գեռ կ'իյնան ապարներու եւ դա-
նակներու տակ: Դահլիճները նոր
միջոցներ գտած են բնակիչ ընե-
լու, սով կազմակերպելով, Հայերը
անսուալ թողով փողոցներուն մէջ,
որ քիչ ատենէն անոնց դիակնե-
րով ծածկուի: Միայն մէկ նա-
հանգի մէջ քառասուն հազար որ-
բեր հաշուած են, որոնք մերկ,
անսուաղ ցուրտէ ու թշուառու-
թեան կը մեռնէին, չունենալով
նոյն իսկ կանանցներու համար ծա-
խուելու դժխեմ բախտը, որով

հետեւ մարդկային միսի շուկան լի
ցուած է:

Կաթողիկ Միարանութիւններ
այս սարսափներ աւելացուցին ի-
րենց անարգ կեղծիքներով: Այս
արարները եւ արբառահիները ո-
րոնք հոս, իրենց սողմական վան-
քերուն մէջ անորակելի մոլու-
թիւններ կը տարածեն, ծիրերուն
թշուառութիւնը կը շահագործեն,
որբերը եւ յիմարները կը չարչա-
րեն զանոնք չափէ դուրս աշխա-
ցնելով, խորհեցան Հայերը ստի-
պել կամ հաւատուրաց ըլլալ կամ
մահը յանձն առնել: Ուրացողները
որոնք հռովմէական եկեղեցին
կ'ընդունին, կոտորածի ատեն վան-
քին մէջ արբաններէն ու արբառ-
հիներէն ապաստանարան մը եւ
տղայոց համար պատառ մը հաց
գտան. իսկ չորացողներուն կ'ապա-
սեն Բիւրտերու եւ Համիտիներու
դանակն, տանջանքը, անգամահա-
տութիւնն ու հարեմական կեանքը:

Եւ նոր ջարդերն ալ կը մօտենան:
Ինչ պիտի ընէ այժմ Գաղղիան
որ այլեւս չի գիտնալու դիւրին
արդարացումն ալ չունի: Աւա՛ղ,
Գաղղիան, ուր մոլեռանդութիւնը
կը ծաղկի, ուր միլիոնաւոր ան-
զուլներ մահ կը պոռան անմեղ
հրեային եւ անոր պաշտպաններուն,
ուր գաղթաւարներու մարդաս-
պանները սքանչացողներ եւ ջատա-
գողներ կը գտնեն, դեռ կրնա՞յ
զթուլթիւն ունեցած ըլլալ: Երբ
կարմիր Սուլիանին Բիւրտերը ու
Համիտիները արիւնով ու միա-
ցող աւերակներով կը ծածկին ըն-
դարձակ երկիր մը, մանուկները
իրենց հայրերուն ծունդերուն վրայ
կտոր կտոր կընեն, ոտքեր, ձեռ-
քեր, գլուխներ կը կտրեն, կի-
ներ կը պղծեն անոնց փորը ճեղքել
ու ուզլ ողլ այրելէ առաջ, փոք-
րիկ մանչերը կ'անգամահատեն եւ
պղտիկ աղջիկները հարէմներուն կը
ծախեն ինչ կընեն անոնք: Ճիշդ ինչ
որ կընեն մեր գաղղիացի սպա-
նները եռագոյն դրոշակին տակ
բոլոր Ափրիկէի մէջ, ինչ որ կը-
նեն մեր վուլէները, Շանուանները
Փրանսական մամուլի երեք քառոր-
դին պաշտպանութեամբ, ինչ որ
կընեն մեր Մառշալները որոնք
կը ծափահարուին ֆրանսացի ժո-

ղովուրդին ինք տասներորդէն: Մենք
մարդասպաններս ոչինչ ունինք ըսե-
լիք օսման: ան մարդասպաններուն.
եւ դժբախտ Հայերը մեծ բան մը
չեն շահիր կիծէ Բիւրտերու դա-
շոյնին տեղ մեր տեղակալ Մէն-
սիէի վեցհարուածեան դրուի:

Ամբողջ Եւրոպան ճանչնալու է իր
պարտականութիւնը եւ զանի գոր-
ծադրելու է վերջապէս. որովհե-
տեւ Հայաստանի թշուառութեանց
համար ամբողջ Եւրոպան յանցա-
ւոր է. խաղաղասիրական վեհա-
ժողովներու եւ մարդասիրական
յայտարարութեան բոլոր խեղկա-
տակութիւններուն հակառակ, այդ
ճանրագոյն ոճիւններու պատաս-
խանալութիւնը ամբողջ Եւրո-
պայի վրայ կը ծանրանայ համե-
րաշխարհ:

Երբեք մարդը ճիւղ մարդաս-
պան մըն է. այդ գիտենք, փոքր
Ասիոյ մէջ ինչ որ եղան անոր
մասնաւոր հրամանովը եւ անոր ո-
րոշ հրահանգներովը միայն եղած
են, այս լսուած է: Բայց միշտ
ասիկա կը կրկնուի մի օգուտ չունի,
եթէ հաստատ որոշումի մը չի
յանգի: Մենք ապահով վեհակի
մէջ գտուելով այդ գաղանին ուղ-
ղած մեր նախատինքները զանի
աւելի կը կատղեցնեն իր ճիւղանե-
րուն տակ բռնած զոհերուն դէմ:
Մնացեալ հայերը ազատելու մի-
այն մէկ միջոց կայ, այն է պե-
տութեանց համաձայնութիւնը ու
անմիջական միջամտութիւնը:

1878 Մարտ 3ին կնքուած Սան
Սթեֆանի դաշնագրին մէջ Ռու-
սիա 16րդ. յօդուածը դրած էր,
որ պարտք կը դնէ Թուրքիոյ
վրայ փոքր Ասիոյ մէջ պէտք ե-
ղած բարենորոգումները շուտով
գործադրել եւ ապահովել Հայերը
Բիւրտերուն ու Չէքէզներուն
դէմ: Աղիքսանտր Բ. Չարը այս
կիրպով կը վարձատրէր պատե-
րազմին մէջ հայ հրամանատարնե-
րուն մատուցած ծառայութիւնը.
նա ատով մարդկային զգացման
մը եւ միեւնոյն ատեն քաղաքական
միտքի մը կը հետեւէր: Հայաս-
տանը կը մտնէր Ռուսիոյ աղդու
եւ ապահով պաշտպանութեան տակ,
որմէ թերեւս Ռուսիա շահ
ունենար:

Պետութիւնը վրայ հասան, պատուեցին Սան Սթէֆանօի դաշնագիրը, անոր տեղը դրին Պերլինի ընդհանուր դաշնագիրը։ Այս անգամ ճիշդ ոչինչ յօդուածը Հայաստանի բարեկարգութիւնը տրամադրեց առանց պայմանաժամ և երաշխաւորութիւն սահմանելու։

Ի՞նչ ընելու էր Եւրոպայի ճիւղը, որ կատարեալ ազատութիւն և Եւրոպայի բացարձակ հաւանութիւնը ունէր իր զոհը լինելու։

Նա տեսած էր թէ ամբողջ Եւրոպան կարգիւ է Ռուսիոյ Հայերու պաշտպանութիւնը, նա տեսաւ որ ամբողջ Եւրոպան անտարբեր կը մնայ քստմնելի ջարդերուն։ Դեռ նոր վիճակը կայսրը Եւրոպայէ մի մէջ ալ եւ ալ եկեղեցեաց Պատրիարքներուն շքանշաններ բաշխած ատեն միայն Հայոց Պատրիարքին առանց ազատագրի նշան տուաւ, ցոյց տալու համար թէ ինք մարթնոյններուն հակառակ է, որ ուրիշ կերպով քաջալիր մըն էր մարթնոյն։ Սուրբանը ատիկայ լսելու էր և շատ աղէկ ալ լսեց։

Մեծ Մարգարայանը Ապտիւլ Համիտը չէ, մեծ մարգարայանը Եւրոպան է։ Հայերը քաղցր, ժրպէս, քաղաքակիրթ քրիստոնեայ ժողովուրդ մը են։ Եւրոպան Հայոց ճակատագիրը ինք ստանձնեց Պէրլինի դաշնագրով։ Եւրոպան պաշտպանութիւն կը ձգէ որ Հայերը չնշուին, որովհետեւ իր ժողովուրդները վատ են, որովհետեւ իր զբաղէտները ծախուած են, որովհետեւ իր կառավարութիւնները չար ծրագիրներուն համար ոտոր ճնշորէներուն վրայ միայն կը մտածեն։

Ի՞նչ ամօթ։»
ԻԻՌՊԵՆ ԿՈՂԻԷ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Կ. Պոլիս, սեպտ. 26/8

ՕՐՄԱՆԵԱՆԻ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԸ

Կարճ գրել ստիպո՞ւած եմ։ Օրմանեան հինգշաբթի առաւօտ կարագետ էֆ. Խաչատուրեանը իր

ԲՈՒՆՈՒԹԵԱՆ ՏԱԿ (49)

ԺԱՄԱՆԱԿԱԿՑ ՅԱՅ ԿԵԱՆՔԷ ՊԱՏԿԵՐ ՄԵ

— 0 —

ՄԱՍՆ Բ.

Հոկտեմբեր 10ի շաբաթ օրը Վահրամ Պոլիսէ Պուլկարիա հեռացող հարիւրաւոր հայերու հետ Վառնա մեկնելու պարտաւորեցաւ վերահաս վտանգէ մը օձիքը ազատելու համար, որովհետեւ թերթերու մէջ հրատարակուած պաշտօնական յայտարարութիւնէն ետքը յայտնի էր որ ոստիկանութիւնը այսպէս թէ այնպէս իր հետքը պիտի գտնէր։

Հոն տխուր եւ ծանծրալի կեանք մը սկսաւ անցնել։ Մտերմական յարաբերութիւններ չ'իշակեց գաղթական հայութեան նոյն իսկ լուրջ նկատուած երիտասարդներուն հետ որոնք յաճախ պոռոտախօս դուրս եկան։

Ամենէն աւելի յաճախուած հայ սըրճարաններէն մէկը իր ալ կեդրոնը եղաւ։ Օրը երկու անգամ երկուքական ժամ կէս օրէ առաջ եւ ետքը կերեւար հոն հայերէն կամ ֆրանսերէն թերթով

բնակարանը կանչելով հրաժարաւ։ Կան մը խմբագրել տուաւ, զոր յետոյ Պատրիարքարանի գործակատար Տիգրան Էֆէնտիի յանձնելով զրկեց Գառական և Կրօնական գործոց նախարարութեան։

Կըսուի որ Օրմանեանի հրաժարականը պատճառաբանեալ է եղեր, ուստի հետեւեալ օրը, ուրբաթ կէսօրին Կրօնական գործոց պաշտօնեան Ջիվեր պէյ Օրմանեանի բնակարանը երթալով Գառական նախարարի կողմէ առաջարկեց որ հրաժարականը ետ առնէ, խոստանալով հայ բանտարկեալներու քննութիւնները փութով կատարելու և անպարտեքը ազատ արձակելու համար խիստ հրամաններ տալ։

Օրմանեան պնդեց իր հրաժարականին վրայ և Ջիվեր պէյ մեկնեցաւ ձեռնունայն։

Նոյն օրը Արթին փաշա Տատեան Պալատէն կանչուած էր, իրիկուան դէմ ալ Օրմանեանի տունը գնաց։ Հոն երկար տեսակցութեան միջոցին փաշան ջանաց հաւոքել որ հրաժարականը ետ առնէ, Պալատին նորանոր խոտուածները թուելով անոր։ Բայց Օրմանեան պնդեց իր հրաժարականին վրայ, այնպէս որ Արթին փաշա ճարահատած խնդիրը խառն ժողովոյ ներկայացնել ան հրաժեշտ տեսաւ։

Չորեքշաբթի օր Խառն ժողովը պիտի գումարուի։ Օրմանեան իր հրաժարագիրը ժողովին ալ պաշտօնապէս պիտի հաղորդէ։ Կըսուի թէ այսօր պալատէն Պատրիարքին պաշտօնագիր մը եկած է, որ հրաժարականին Սուրբանէն մերժուիլը կիմացնէ։

Առ այժմ ասչափ։

0.

Պուրկազ, 27 սեպտ. 99
«ԵՍ» ԵՒ ԿԻՐՔ

Մարդիկ երբ եսին կամ կրից կը բռնուին, ինչե՛ր ասենք որ չեն ընել։ Անոնց համար չ'կայ խիղճ, չ'կայ սրբութիւն, չ'կայ պատիւ, ամեն ինչ լոկ իրենց ըստոր կրից սոհմանուած կը կարծեն։ Թէ անմեղ մըն է որ կը

մը եւ անկիւն մը առանձնացած խոր ընթերցումի մէջ կը մխրճուէր։

Ձգած մօրուքը, յունական գլխարկը, երկար վերարկուն իր գէմբին արտայայտութիւնը փոխած էին։ Իր շատ մը ծանօթները իրեն հանդիպեցան Վառնայի մէջ բայց չկրցան զայն ճանչնալ։ Իր ալ ուզածը այդ էր։

Պոլիսի մէջ իր յեղափոխական գործունէութիւնէն եթէ ոչ ամբողջութեամբ մեծ մասով յուսախաբ եղած էր եւ հիմայ գիտեր թէ իր ուզած եղանակով աշխատել զժողովրդին էր, միտքով ու հոգեով Ակն սեւեռուած էր։

«Ե՛րբ պիտի հասնի այն երանելի օրը որ միջոցով մը կարենամ Հայրենիք վերադառնալ, անոր զեղեցիկ տեսքին երբ պիտի արօժանանամ» կըսէր մտովին։

Հայրենիքի ցաւը վիշտերու ամենէն քանդողն է։ Ով որ ունեցած է ճշմարտապէս այդ ցաւը, անիկայ քաջ պիտի գիտնայ թէ ուր կը տանի այդ ցաւը զմարդ եթէ նա չ'յաջողի անոր զարման տանիլ, դարման որ միայն իր ծննդավայրը գիտի եւ վերջնականապէս անոր կապուելուն մէջ կը կայանայ։

զոհուի, այդ փոյթ չէ, բաւաւ կան է որ յաջողութիւնը շահած կարծեն կամ իրենց զոհը տան։ Զանքներու մէջ տեսնեն ու հրճուին ժամանակ մը։

Այդպիսի բերրոյ կրից գիրի եւ զող թղթակից մը մօտեքս «Վարդգէս» ստորագրութիւնով երեւան եկաւ «Ծայրիկ»ի 16 թուոյն մէջ։ Պարոն թղթակիցը իր յօդուածովը ոգի ի բռնի կաշխատի տեղւոյս կ'իթական գործերու անկեր։ Կարան վիճակի պատճառը քահա, նախ բռնել և շատ մը սուտեր յերեւել անոր վրայ։ Պ. թղթակիցը իր այդ յօդուածով ոչ միայն արդարութեան դէմ կը մեղանչէ, այլ ուղղակի զրպարտանք մըն է որ կընէ անմեղի մը հանգէպ, լոկ անձնական հաշիւներու և եւրի ազդեցութեամբ։ Արդէն Բուլղարիոյ հայ մամուլը վկայ է թէ տեղւոյս խռովութեանց պատճառը քահա, նայի խնդիրը ըլլալէ շատ հեռի է։ Մանաւանդ որ, նա իր պարտականութենէ անդին բան մը ըրած չէ, և միշտ նոյն իսկ իր դէմ գործուած ամեն խարդաւանքներուն, անյիշաչար եղած է և աշխատած է տիրող խռովութեանց առաջին առնել։

Պ. թղթակիցը եթէ անկոմիտակալ էր, պէտք էր յիշիլ այն զեղծաւմները, զոր քահանան գործած է, որպէսզի հասարակութիւնը պժգար և վաճէր իր մէջէն՝ դէպի կորուստ առաջնորդող այդ կղերք, երբ որ մատնանիչ չընելու բան մը միամիայն անցեալով ու ըսի ըսաւներով կը զբաղի, առանց փաստի, ըսել է կեղծաւոր զրպարտիչ մըն է, որ պարտաճանաչ և անարատ կղերական մը արատաւորել կաշխատի։

Պ. թղթակիցը քահանային իր կոչման արժանի չըլլալուն իրեւել փաստ զայն անձնապաշտ կանուանէ։ Արդեօք անձնապաշտ եւ իր

Վերջին տարիներու մէջ այդ ցաւով կատարեալ անկեղծութեամբ տառապող երիտասարդներ ունեցանք։ անոնք որ Մայր-Հայրենիք գիմեցին հոգեով եւ մարմնով ազատեցան։ Իսկ անոնք որ չկրցան՝ կամ զոհ դացին մաշող ցաւին եւ կամ օր մը չէ օր մը պիտի զոհուին։

Վահրամը տակն ու վրայ ընող վիշտերուն մէջ սփոփող պարագայ մը եղաւ իր գրած նամակին փոխարէն Լեւոն Պողոսեանի ստացած մէկ նամակը։

Լեւոն էջմիածին մեկնիւ է ետք Պարսկաստան ալ անցաւ, ուր պահ մը ուսուցչութեամբ զբաղուեցաւ։ հակառակորդներու հանդիպեցաւ ան հոն։ Իր ամենէն մեծ թերութիւնը կուսակցական ոգեով տողորուած եւ ասից առաջ գլուխի մը մէջ մեր բացատրած խմբակ եւ խմբապետ խաղաղդներու համակցութիւնն էր։ Ծառ մը յայտնի եւ անյայտ յանցանքներ վերագրեցին անոր, մինչեւ իսկ մահացու մեղքեր, մինչեւ որ կարգ մը վատերու ձեռքէն եւ Օսմանեան կառավարութիւնէն մինչ Դաւութ ձգուող հալածանքէն ճողպղիւրու համար Խրիմեան Հայրիկի հետ ունեցած ծանօթութիւնէն քաջալերուած

կոչման անարժան է, երբ կարգ մը շահախնդիրներու գործիք լինելու և նախապաշարունակութեամբ կարեւորութիւն չի տար իր նախորդներուն նման, որոնցմէ մի քանին ժողովուրդը շահագործած են ճշմարտ, դողի թել և ալ թախելով պարզամիտ անհասանելիութեան և որոնց հաւատք չընծայելու և որոնց անհաւատ թղթակցի քաղաքարին, նախնեաց կանոններէ դէմ մեղանչելի է եղեր։ Եթէ մեր թղթակիցը քիչ մը խիղճ ու ազնուենար տեսնալու և զգալու գտնէ, զգացած կըլլար անշուշտ քահանայի շերմաւանդ և պարկեշտ ըլլալը, այդ պատճառաւ վայելա ժողովրդականութիւնը և ի վրայ ճիգեր չէր թափեր անմեղի մը նունը արատաւորելու։ Պարկաշտ հասարակութիւնը ուշադիր է եւ չըլլա՞յ յետ, եթէ մի զեղծութեան գործուի, նա կարող է տեսնել։ Ըստ Պ. թղթակցի բացատրութեան՝ քահանան արհամարհանք կը վերաբերուի եղեր դէպի կըրթական գործը։ Կերեւի չի յիշար այն օրերը երբ ոգի ի բռնի սըրճարանէ արճարան կը պտուէր կըրթական գործին համար հանգաւանութիւն ընելու և եկեղեցեաց բեմէն անոր կարեւորութիւնը թուելով՝ կոչում կ'ընէր հասարակութեան, որ ամեն հայ անհատ մասնակցի մատաղ սերնդի դաստիարակութեան գործին։

Մարգար Բուրուլլին անխեղճ ըլլալու է որ, կարենայ այդպիսի խոշոր սուտեր գործել։ Կրթական գործի համար գէճեր շատ եղան, և տակուն կ'ըլլան։ Բայց Պ. թղթակցին այդ վէճերու պատճառը քահանային վերագրելը լոկ անձնական եսը և կիրքը յագեցնելու նպատակաւ է։ Ամեն մարդ գիտէ, որ վեց ամիսներէ ի վեր վարժապետական խնդիր (կոյ՛ք քահանայի) որ կը ծեծուի և տա-

կրկին Ռուսաստան էջմիածին անցաւ։ Հոն կաթողիկոսին անձնական քարտուղար կարգուեցաւ։

Օրին մէկն ալ վերջապէս որոշում տուաւ կրօնական սքեմը հաղնելու։ Էջմիածնի վանքին վաւաչոտ, անպարկեշտ, շահամոլ կրօնականները իր զայրոյթը դրգոած էին առջի մէկ օրէն։ անոնցմէ շատերուն հետ ինչ ինչ առիթներով մաքառած էր իրենց անտարբերութեան համար։ Անոնցմէ բացառած լիւրս եւ հեղեղական պատասխանը սա էր։

«Դուն ալ հէնց միանգամ կրօնական դարձի տես թէ ի՞նչ կը լինի»։

«Պիտի ըլլամ եւ պիտի աշխատի արիւր կրօնական մը ըլլալ կարեւոր չափով»։ մտածեց Լեւոն։ Անկից ետքը առանց ժամանակ կորսնցնելու Հայրիկին ներկայացաւ եւ իր փախաբ յայտնեց անոր։ Հայրիկ ուրախութեամբ ընդունեց զինքը եւ ԳՅԻՆ արեւոյ վարդապետ ձեռնադրուեցաւ Մկրտիչ Տէրուհեան անունով։

Շ. Կամուսարական (Շաւռնակեղի)

— 0 —

